CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

12 դեկտեմբեր, 2023

ՔՈԱՖ-ի 20-րդ ամենամյա Գալան նոր մրցանիշ է սահմանում՝ հավաքելով ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլար

ՆՅՈՒ ՅՈՐՔ — Դեկտեմբերի 9-ին «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը (ՔՈԱՖ) **պատմական հաջողություն գրանցեց**՝ իր 20-րդ ամենամյա Գալայի ընթացքում հավաքելով ավելի քան **10 միլիոն ԱՄՆ դոլար:** Հանգանակություններն ամբողջությամբ ուղղվելու են Հայաստանի գյուղական համայնքներում ՔՈԱՖ-ի համապարփակ նախաձեռնությունների խթանմանը, որոնք ընդգրկում են կրթության, առողջապահության, հոգեսոցիալական աջակցության և տնտեսական զարգացման կարևորագույն ուղղությունները: Բացի այդ, դրանք կուղղվեն ՔՈԱՖ-ի ընթացիկ H.O.P.E. («Հույս») նախագծի աջակցությանը, որը միտված է Արցախից բռնի տեղահանված ընտանիքների անհետաձգելի ու երկարաժամկետ կարիքների բավարարմանը:

«Երկու տասնամյակ՝ հավատարիմ մեր խոստմանը» խորագիրը կրող իրադարձությունը վարում էին Լոս Անջելեսի հեղինակավոր Fox 11 հեռուստաալիքի հեռուստալրագրող Արաքսյա Կարապետյանը, ՔՈԱՖ-ի զարգացման գծով տնօրեն Հայկ Բոյաջյանը և աշխարհահռչակ աճուրդավար Գաբրիել Բուտուն: Երեկոյի երաժշտական հյուրերն էին ջազ երգչուհի Աստղիկ Մարտիրոսյանը Նյու Յորքից, 10-ամյա դաշնակահար Մենուա Մելիք-Հայկազյանը և 13-ամյա ջութակահար Դավիթ Բաբայանը Հայաստանից: Հատուկ ելույթներով հանդես եկան հանրահայտ ու նշանավոր հյուրեր, այդ թվում՝ մրցանակակիր, դերասանուհի, ՔՈԱՖ-ի վաղեմի ընկեր ու աջակից Անդրեա Մարտինը: Իրադարձությանը ներկա էին նաև անվանի նկարիչներ Մայքլ Արամը և Տիգրան Ձիթողցյանը:

ՔՈԱՖ-ի 20-րդ ամենամյա Գալայի շրջանակում անվանի դերասան Ջո Մանգանելոն արժանացավ հեղինակավոր մարդասիրական մրցանակի՝ Փիթսբուրգի մանկական հիվանդանոցին աջակցելու և իր ընտանիքի պատմությունը, արմատներն ու հայկական մշակույթը հանրայնացնելու համար: ՔՈԱՖ-ի բարերարներ ու նվիրյալներ Թամար և Ջոն Ախոյանները Լոս Անջելեսից արժանացան «Փրկիր սերունդ» մրցանակին գյուղական համայնքներում ՔՈԱՖ-ի աշխատանքի առաջխաղացման գործում իրենց էական ազդեցության համար:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

Գալայի գլխավոր հովանավորներն ու դոնորներն էին Յուրեջյան ընտանիքի բարեգործական հիմնադրամը, ՔՈԱՖ-ի համահիմնադիր և նախագահ Գարո Արմենը, Աֆեյան ընտանիքի հիմնադրամը, ՅՀՄ բարեգործական հիմնադրամը, պարոն և տիկին Վիկտոր Զարուգյանները և Ջուդիթ Սարյանը, Աճեմյան հիմնադրամը, ինչպես նաև մի քանի անանուն բարերաներ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՔՈԱՖ-ն անհավանական առաջընթաց է գրանցել՝ իրագործելով նախաձեռնություններ, որոնք նպաստում են տնտեսական և սոցիալական կայունությանը, ապահովում են կրթական հնարավորություններ, ինչպես նաև տրամադրում անհրաժեշտ ռեսուրսներ գյուղական համայնքներում կարիերայի և տնտեսական աճի համար: Բարելավելով 100,000 մարդու կյանքի որակը Հայաստանի և Արցախի 82 համայնքում՝ ՔՈԱՖ-ն ապացուցում է, որ ազգի հզորացումը գյուղերից սկսելը ոչ միայն իրագործելի, այլև ավելի քան հասանելի նպատակ է:

Հիմնադրամի 20-րդ հոբելյանական Գալան ոչ միայն նշանավորվեց գյուղական համայնքների համար իրականացված տպավորիչ դրամահավաքով, այլ նաև ընդգծեց ՔՈԱՖ-ի շարունակական նվիրվածությունը Հայաստանի գյուղաբնակ ընտանիքների, երեխաների համալիր զարգացմանն ու նրանց ներուժի բացահայտմանը: Հաշվի առնելով Հայաստանի առջև ծառացած ներկայիս մարտահրավերները՝ այս տարի դրամահավաքը լրացուցիչ կխթանի ՔՈԱՖ-ի H.O.P.E. («Հույս») նախաձեռնությանը: Դրա նպատակն է աջակցել Արցախից տեղահանված ընտանիքներին՝ բնակարանային, կրթական հնարավորությունների, հոգեսոցիալական աջակցության, առողջապահական ծառայությունների տրամադրման, ինչպես նաև կարողությունների հզորացման միջոցով:

ՔՈԱՖ-ի մասին ավելին իմանալու և հիմնադրամի առաքելությանն աջակցելու համար այցելեք coaf.org կայք:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին
«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

CHILDREN
OF ARMENIA
FUND

Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723